

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՄոբիԴրամ» ՓԲԸ (Մ-Դրամ)
Տնօրենների Խորհրդի որոշմամբ
Արձանագրության ամսաթիվ
29/09/2021 թ.

**«ՄոբիԴրամ» ՓԲԸ (Մ-Դրամ)
Գործարար վարվելակերպի և էթիկայի
կանոնակարգ**

Երևան
2025

Բովանդակություն

Մ-Դրամ-ի ղեկավարության ուղերձը

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1.1.	Ի՞նչ են կանոնները և ինչո՞ւ են անհրաժեշտ.....	4
1.2.	Ո՞ւմ վրա են տարածվում կանոնները	4
1.3.	Լրացում կատարելու կարգը և հակասությունները.....	4
2.	ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԷԹԻԿԱՆ	4
2.1.	Որոշում ընդունելու սկզբունքները.....	5
2.2.	Ղեկավարների պատասխանատվությունը	5
3.	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԻԶՆԵՍ.....	5
3.1.	Հարմարավետ աշխատանքային պայմաններ	5
3.2.	Շահերի բախման կարգավորում և այլ գործնական պրակտիկաներ	6
3.3.	Մ-Դրամ-ի և երրորդ անձանց ակտիվների պաշտպանությունը.....	6
3.4.	Բարեխիղճ կոմերցիոն պրակտիկա	7
4.	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՍԴԵՐՈՒԹՅԱՆԸ	7
4.1.	Կոռուպցիայի և կաշառակերության ցանկացած դրսևորման արգելքը	7
4.2.	Տեղեկատվության հաշվառում և բացահայտում	8
4.3.	Ներքին (ինսայդերական) տեղեկատվության կիրառություն.....	9
5.	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ	9
5.1.	Պատասխանատվություն որոշումների համար	9
5.2.	Շրջակա միջավայրի պաշտպանություն.....	9
6.	ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	9
6.1.	Զեկուցում.....	9
6.2.	Հետապնդման արգելք	10
7.	ԱՍՓՈՓՈՒՄ	10
	Մ-ԴՐԱՄ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ.....	11

Մ-ԴՐԱՄ-Ի ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի գործընկերներ,

Ձեզ ենք ներկայացնում Մ-Դրամ-ի Գործարար վարվելակերպի և էթիկայի կանոնները (այսուհետ՝ Կանոններ): Այն մեր թիմում ընդունված վարվելակերպի կարևորագույն կանոնների և բիզնեսի վարման սկզբունքների ժողովածու է՝ բոլոր ներգրավված կողմերի համար:

Մ-Դրամ-ը դինամիկ և նորարար ընկերություն է, որը վերջին տարիների ընթացքում վերաճել է թվային էկոհամակարգի: Այն միավորում է մեր բիզնեսի ուղղությունների մշակութային բազմազանությունը **#ՄոքիԴրամ**-ի ընդհանուր փիլիսոփայության ներքո: Ընկերության բիզնես ռազմավարությունը էապես կարևորում է երկարաժամկետ հարաբերությունները հաճախորդների հետ մասնավորապես միտված վերջիններիս կարիքներին, նրանց հավատարմության բարձրացմանը և ծառայությունների ու ապրանքատեսակների օգտագործման շահավետ պայմանների տրամադրմանը:

Կանոնների ոգին ավելի լավ զգալու համար կարևոր է հասկանալ այն սկզբունքները, որոնք ընկած են **# ՄոքիԴրամ** -ի հիմքում: Այդ սկզբունքների պահպանումը ոգեշնչում է մեր թիմին, օգնում է հասնել բարձր արդյունքների և դառնալ լավագույնը մեր ձեռնարկած ցանկացած գործում:

Մեր բիզնես գործընթացների, ապրանքատեսակների մշակման և կատարելագործման և հաճախորդների ու հասարակության հետ հարաբերությունների հետ կապված հարցերում մենք առաջնորդվում ենք հինգ հիմնարար արժեքներով՝ **նորարարություն, պատասխանատվություն, հարգանք, թիմային աշխատանք և հավատարմություն**:

Միևնույն ժամանակ, անկախ Ընկերության ռազմավարությունից, Մ-Դրամ-ը մշտապես հավատարիմ է բիզնեսի վարման լավագույն պրակտիկաներին և բիզնեսի ողջ էկոհամակարգում գործարար վարվելակերպի և էթիկայի կանոնների ցանկացած խախտման նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքին:

Էթիկայի նորմերին համապատասխանությունը, ազնվությունն ու արդարությունը մեր վարքագծի հիմքն են, և Մ-Դրամ -ի ղեկավարներից և աշխատակիցներից պահանջվում է անվերապահորեն հետևել դրանց: Մ-Դրամ-ի բիզնեսի կայուն աճի և մրցակցային առավելություն ստանալու գրավականն են ընկերության գործունեության հիմքում ընկած այնպիսի հիմնարար արժեքներին հավատարիմ մնալը, ինչպիսիք են բիզնեսի բարեխիղճ վարումը, Ընկերության ռեսուրսների նկատմամբ գիտակցված և պատասխանատու վերաբերմունքը:

Որպես Մ-Դրամ-ի ղեկավար խորհրդի անդամներ՝ մեր դերը ոչ միայն Կանոններով սահմանված պահանջները խստորեն պահպանելն ու դրանց համապատասխանելն է, այլև Մ-Դրամ-ի ընտանիքի բոլոր անդամներին բացատրելը և այդ սկզբունքներին հետևելու ու դրանք հարգելու ձգտումն ապահովելը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ի՞ՆՉ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՈՒ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Կանոնները ներառում են Մ-Դրամ-ի կողմից ընդունված սկզբունքները, վարքագծի չափանիշները և բիզնես պրակտիկան, որոնք երաշխավորում են ազնիվ և արդար վերաբերմունք մեր թիմի անդամների, գործընկերների, հաճախորդների նկատմամբ, ինչպես նաև օրենսդրության և Ընկերության ներքին նորմատիվային ակտերի պահպանումը:

Մ-Դրամ-ի անունից աշխատանքային պարտականություններ կատարելիս Ընկերության աշխատակիցներն ու ղեկավարները պետք է գործեն ազնվորեն, օրենսդրությանը և էթիկայի չափանիշներին համապատասխան և Ընկերության շահերից ելնելով: Կանոնները կօգնեն ժամանակին բացահայտել այն իրավիճակները, որոնք չեն համապատասխանում Ընկերության էթիկայի սկզբունքներին: Մ-Դրամ-ի բոլոր աշխատակիցներն ու ղեկավար կազմը պետք է ծանոթանան Կանոններին և անցնեն համապատասխան վերապատրաստում:

Մ-Դրամ-ն իրականացնում և օժանդակում է Կիրառելի հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների և Ընկերությունում կիրառվող համապատասխանության վերահսկողության միջոցների վերաբերյալ ուսումնական ծրագիր աշխատակիցների ու ղեկավարների համար, որոնց վրա տարածվում է սույն Քաղաքականությունը՝ օգտվելով հատուկ մշակված ուսուցման համակարգից ռիսկերի վրա հիմնված մոտեցման վրա՝ ներքին պորտալում հասանելի ուսուցման տարեկան պլանին համապատասխան:

1.2. Ո՞ՒՄ ՎՐԱ ԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կանոնների դրույթները տարածվում են Մ-Դրամ-ի բոլոր աշխատակիցների և ղեկավարների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, պարտականություններից, աշխատանքային ստաժից և աշխատավայրից:

Մենք ձգտում ենք, հնարավորության դեպքում, ապահովել, որ փոխկապակցված ընկերությունները, որոնց նկատմամբ Մ-Դրամ-ը վերահսկողություն չի իրականացնում, ինչպես նաև գործընկերներն ու մատակարարները իրենց գործունեությունն իրականացնեն սույն Կանոններով սահմանված չափանիշներին համապատասխան: Եթե դուք առնչություն եք ունենում երրորդ կողմի/անձի հետ, ապա համոզվեք, որ գործընկերը համաձայն է Կանոններում արտացոլված էթիկայի չափանիշներին:

1.3. ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ-Դրամ-ի Կանոնները կարող են լրացվել և փոփոխվել՝ հաշվի առնելով գործող օրենսդրությունը, այդ թվում՝ առանձին նորմատիվային փաստաթղթերով՝ ցանկացած պահի, առանց նախնական ծանուցման:

Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, որին կարելի է ծանոթանալ Ընկերության www.mobidram.am պաշտոնական վեբ կայքում:

Եթե Կանոնների որևէ մաս հակասում է տեղական օրենքներին կամ նորմատիվային ակտերին, ապա կիրառվում են միայն սույն օրենսգրքի այն բաժինները, որոնք չեն հակասում գործող օրենքներին և նորմատիվային ակտերին:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԷԹԻԿԱՆ

Միայն արդար և էթիկայի չափանիշներին համապատասխան բիզնեսը կարող է կայուն լինել: Աշխատակիցներից յուրաքանչյուրի գործողությունները կարող են անմիջականորեն ազդել Ընկերության հեղինակության և ֆինանսական վիճակի վրա, և հետևաբար, յուրաքանչյուր աշխատակցի պատասխանատու և գիտակցված էթիկական վարքագիծը երաշխավորում է ողջ Ընկերության հաջողությունն ու բիզնեսի կայունությունը:

2.1 ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Կանոնները սահմանում են վարքագծի և որոշումների ընդունման հիմնական սկզբունքները, սակայն անհնար է կանխատեսել բոլոր հավանական իրավիճակները:

Եթե չգիտեք՝ ինչպես վարվել, սվեք ձեզ հետևյալ հարցերը.

- Արդյո՞ք դա օրինական է:
- Արդյո՞ք դա ազնիվ և արդարացի է:
- Արդյո՞ք դա համապատասխանում է Ընկերության շահերին:
- Արդյո՞ք դա համապատասխանում է Ընկերության կանոններին:
- Արդյո՞ք ես ունե՞մ լիազորություններ դրա համար:
- Որքանո՞վ լավ կզգամ ինձ, եթե իմ գործողությունների մասին տեղեկությունը հայտնվի ՋԼՄ-ներում:

Եթե այս հարցերից որևէ մեկի պատասխանը «Ոչ» է, անհրաժեշտ է զերծ մնալ այդ գործողությունից:

Եթե Կանոններում ընդգրկված թեմաների վերաբերյալ հարցեր ունեք, կասկածում եք՝ արդյոք իրավիճակը կանոնակարգվում է Կանոններով կամ հանդիսանում է Կանոնների խախտում, ապա պետք է քննարկեք այն ձեր անմիջական կամ ավելի բարձր մակարդակի ղեկավարի հետ կամ հարցը ուղարկեք Համապատասխանության գծով համակարգողին (compliance@viva.am):

2.2 ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերության ղեկավարներն ունեն լրացուցիչ պատասխանատվություն՝ ստեղծելու և պահպանելու այնպիսի աշխատանքային միջավայր, որտեղ թիմի անդամները գիտեն և հասկանում են իրենց պարտականությունները, հոգեբանորեն ապահով են զգում և կարող են ազատորեն արտահայտել իրենց մտահոգությունները, ստանալ արձագանք, և որոնց մտահոգությունների համար ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԻԶՆԵՍ

3.1 Հարմարավետ աշխատանքային պայմաններ

Մ-Դրամ-ը ձգտում է ապահովել պատշաճ և անվտանգ աշխատանքային պայմաններ:

Ընկերության էթիկայի հրամայականն է՝ պահպանել մարդու իրավունքները, ստեղծել արդյունավետ աշխատանքային միջավայր թիմում, պատշաճ կերպով կառավարել աշխատակիցների առողջությանն, անվտանգությանը և հոգեբանական բարեկեցությանը առնչվող հարցերը:

Համաձայն Կանոնների՝ Մ-Դրամ-ի աշխատակիցները (այդ թվում ղեկավարները) պետք է անեն հնարավոր ամեն ինչ, որպեսզի ստեղծեն բարենպաստ աշխատանքային միջավայր, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի լիովին բացահայտել իր ներուժը և զերծ մնալ ցանկացած տեսակի ճնշումներից, ոտնձգությունից, կողմնակալությունից և խտրականությունից: Մ-Դրամ-ը չի հանդուրժում անընդունելի պահվածքի ցանկացած դրսևորում՝ անկախ աշխատակցի պաշտոնի կարգավիճակից:

3.2 ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

Ընկերությունը չի կարող թույլ տալ, որ անձնական շահերը, օրինակ՝ հաճախորդի, մատակարարի, մրցակցի, գործընկերոջ կամ Մ-Դրամ-ի այլ աշխատակցի հետ անձնական հարաբերությունները, անմիջական ազդեցություն ունենան մեր աշխատակիցների՝ Մ-Դրամ - ում աշխատելու ընթացքում արդար և օբյեկտիվ որոշումներ կայացնելու հարցում:

Ոչ բոլոր շահերի բախումներն են խնդրահարույց, սակայն եթե դրանց մասին պատշաճ կերպով չի զեկուցվում, և դրանք չեն կարգավորվում, ապա դա կարող է բացասական հետևանքներ ունենալ աշխատակցի, ղեկավարի, ինչպես նաև Ընկերության բրենդի համար: Շահերի բախման ցանկացած իրավիճակի համար լավագույն կանոնը «զերծ մնալն» ու «բացահայտելն» է. եթե հնարավոր չէ խուսափել շահերի բախում առաջացնող գործունեությունը կամ իրադարձությանը մասնակցելուց, ապա պետք է հայտնել դրա մասին և զերծ մնալ համապատասխան որոշումներին մասնակցելուց, մինչև շահերի բախումը կարգավորվի:

Շահերի բախում առաջանալու դեպքում վարվելակեպի կանոնները, այդ թվում՝ արտաքին գործարար հարաբերությունների ընթացքում, ներդրումային գործունեություն իրականացնելիս, առավել մանրամասն ներկայացված են [«Շահերի բախման կառավարման»](#) քաղաքականության մեջ:

Բացի այդ, Մ-Դրամ-ը մշակել և հետևում է պատասխանատու կերպով նվերներ տալու/ընդունելու և գործարար հյուրընկալության դրսևորումների սկզբունքներին, ինչպես նաև [«Նվերները և գործարար հյուրընկալությունը»](#) համապատասխան քաղաքականության մեջ սահմանել է դրանց ընդունելիության չափանիշները: Մ-Դրամ-ը թույլ չի տալիս նվերների անբարեխիղճ օգտագործումը, օրինակ՝ ոչ իրավաչափ առավելություն ստանալու նպատակով:

3.3 Մ-ԴՐԱՄ-Ի ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է Մ-Դրամ -ի ակտիվները, ներառյալ՝ նյութական և մտավոր սեփականությունը, գաղտնի տեղեկությունները, անձնական տվյալները, պաշտպանել գողությունից, վնասից, սխալ օգտագործումից և ոչ պատշաճ տնօրինումից: Այդ պատասխանատվությունը վերաբերում է նաև երրորդ անձանց կողմից մեզ վստահված ակտիվներին:

- **Պետական գաղտնիքի կամ այլ գաղտնի տեղեկությունների** ցանկացած փոխանցում պետք է խստորեն համապատասխանի անվտանգության պահանջվող ընթացակարգերին:
- Մ-Դրամ -ի աշխատակիցներն ու ղեկավարները **Մ-Դրամ -ի գաղտնի տեղեկություններն** օգտագործում են միայն բիզնես նպատակներով և միշտ պետք է պահեն և տնօրինեն այդ

տեղեկությունները՝ տեղեկատվության անվտանգության ռեժիմի պահանջներին համապատասխան:

- Աշխատանքային պարտականությունները կատարելու համար Մ-Դրամ -ը կարող է ձեռ տրամադրել հաճախորդների, աշխատակիցների, բիզնես գործընկերների, մատակարարների և այլոց **անձնական տվյալներին** մուտքի իրավունք: Այս տվյալների հետ պահանջվում է վարվել առանձնապես զգույշ և պատասխանատու կերպով՝ խստորեն հետևելով **անձնական տվյալների մշակման վերաբերյալ քաղաքականությանը**. դրանց պաշտպանությունը նույնքան առաջնահերթ է, որքան բիզնեսի շարունակականությունը:
 - **Մտավոր սեփականությունը** Մ-Դրամ -ի ամենաարժեքավոր ակտիվներից մեկն է: Մենք պաշտպանում ենք մեր ստեղծած մտավոր սեփականության օբյեկտները և հարգում շուկայի այլ մասնակիցների մտավոր սեփականությունը: Միշտ պետք է հիշել, որ նման տեղեկատվության սխալ օգտագործումը կամ բացահայտումը, անգամ Մ-Դրամ-ի ներսում, կարող է լրջորեն վնասել Ընկերության համբավը, նրա հաճախորդներին, բիզնես գործընկերներին և մասնագիտական հանրությանը, պատասխանատվության ենթարկել Մ-Դրամ -ին և վնաս հասցնել բիզնես գործընթացներին: Խախտումների մասին տեղեկատվության փոխանցման ուղիների միջոցով անմիջապես հաղորդեք Մ-Դրամ -ի ակտիվների ցանկացած փաստացի կամ ենթադրյալ միջադեպի կամ Ընկերության ակտիվների անօրինական օգտագործման մասին:

3.4 ԲԱՐԵԽԻՂՃ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Մ-Դրամ-ը հաճախորդների հետ կառուցում է երկարաժամկետ հարաբերություններ՝ նրանց տրամադրելով բարձրակարգ և անվտանգ ծառայություններ ու ապրանքատեսակներ, ինչպես նաև սպասարկման հարմարավետ պայմաններ: Հաճախորդի ոչ մի հաղորդագրություն չպետք է մնա անպատասխան:

Մ-Դրամ-ը օգտագործում է ծառայությունների առաջխաղացման բարեխիղճ մեթոդներ, որոնք չեն կարող ընկալվել որպես ոչ էթիկական կամ վնաս հասցնել հաճախորդներին, գործընկերներին կամ երրորդ անձանց:

Մենք մրցակցային առավելություններ չենք ստանում անօրինական և ոչ էթիկական եղանակներով, այդ թվում՝ գաղտնի համաձայնությունների և կոռուպցիոն գործողությունների միջոցով: Մ-Դրամ-ի աշխատակիցները և ղեկավարները չեն կարող քննարկել գներ կամ որևէ պաշտոնական կամ ոչ պաշտոնական համաձայնագիր կնքել ցանկացած մրցակցի հետ գների, զեղչերի, բիզնեսի վարման պայմանների կամ շուկայի սեզմենտների և ուղիների վերաբերյալ, որտեղ Ընկերությունը մրցակցում է, եթե նման քննարկման կամ համաձայնագրի նպատակը կամ արդյունքը հակասում է կիրառելի նորմերին:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆԸ

Մ-Դրամ-ի աշխատակիցները և ղեկավարները պետք է հետևեն կիրառելի նորմերի, Ընկերության նորմատիվային փաստաթղթերի սահմանած պահանջներին՝ անկախ իրենց գործունեության իրականացման վայրից:

4.1 ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Ընկերության անունից կամ շահերից գործող աշխատակիցներին և անձանց Մ-Դրամ-ն արգելում է ինչպես ինքնուրույն, այնպես էլ միջնորդների միջոցով առաջարկել, խոստանալ, իրականացնել, հաստատել, պահանջել կամ ընդունել ցանկացած անօրինական վճարումներ և այլ անօրինական առավելություններ ցանկացած պետական կամ մասնավոր անձանցից՝ բիզնես գործունեություն ծավալելու, այն պահպանելու, կառավարելու կամ իր գործունեությունն իրականացնելու ընթացքում այլ՝ ոչ իրավաչափ շահ ապահովելու նպատակով:

Մ-Դրամ-ը չի կատարում վարչարարության պարզեցման վճարներ և չի մասնակցում քաղաքական գործողությունների, այդ թվում՝ չի ֆինանսավորում կուսակցությունների և քաղաքական պաշտոններ զբաղեցնող թեկնածուների:

Կոռուպցիայի հավանական ռիսկեր պարունակող ցանկացած գործարք (ներառյալ՝ նվերներ, ներկայացուցչական ծախսեր, պետական պաշտոնյաների կամ պետական կազմակերպությունների հետ փոխգործակցություն, հովանավորչություններ, բարեգործություններ և այլն)՝ պայմանավորված բիզնես որոշման վրա ազդելու ռիսկով, իրականացվում է՝ հաշվի առնելով [Հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման մասին քաղաքականությունը](#) և Մ-Դրամ-ի՝ համապատասխանության ներքին վերահսկողության միջոցները:

4.2 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ և ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Թափանցիկ հաշվառում

Մենք ցանկանում ենք, որ մեր հաճախորդները, աշխատակիցները, գործընկերները, բաժնետերերը և ներդրողները ունենան բավարար տեղեկատվություն մեր գործունեության վերաբերյալ: Մենք ձգտում ենք բաց և ափսոսելի լինել մեր հաղորդակցության շրջանակում: Տեղեկատվության բացահայտման դեպքում մենք առաջնորդվում ենք տեղեկատվության թափանցիկության և Ընկերության առևտրային շահերի ապահովման միջև ողջամիտ հավասարակշռության պահպանման սկզբունքներով:

Տեղեկատվության բացահայտում

Մ-Դրամ-ը ձգտում է, որ հաշվապահական գրանցամատյանները, հաշվետվությունները, հաշիվները և ֆինանսական հաշվետվությունները վարվեն պատշաճ մանրամասնությամբ, ճիշտ ներկայացնեն Ընկերության գործողությունները՝ կիրառելի նորմերին և ներքին վերահսկողության համակարգին համապատասխան:

Յուրաքանչյուրս պետք է հիշի, որ ճշգրիտ հաշվետվությունը կարևոր է ոչ միայն այն պատճառով, որ այն պահանջվում է կարգավորող մարմնի կողմից, այլ նաև այն պատճառով, որ այդ տվյալներն օգնում են պահպանել Ընկերության մրցունակությունը շուկայում: Ուստի, մեր կողմից տրամադրված գործարար տեղեկատվությունը միշտ պետք է լինի ճշգրիտ, ժամանակին, ամբողջական, արդար և հասկանալի: Մ-Դրամ-ում արգելվում է փաստաթղթերի կեղծումը, ցանկացած գործողությունների իրական բնույթի խեղաթյուրումը:

Մենք ապահովում ենք մեր գործունեության թափանցիկությունը՝ տարբեր շահագրգիռ կողմերի հետ բաց փոխգործակցության միջոցով և պարբերաբար հրապարակելով ամբողջական, հավաստի, պատշաճ, ժամանակին և հասկանալի տեղեկատվություն:

Հանրային հաղորդակցություն

Մ-Դրամ-ի ապրանքանիշն ու հեղինակությունը մեր ամենաթանկ ակտիվներից են, և շուկայում Ընկերության դիրքը մեծապես կախված է դրանց պաշտպանությունից և առաջխաղացումից:

Աշխատակիցները պետք է հիշեն, որ սոցիալական լրատվամիջոցներում կամ այլ հանրային ռեսուրսներում իրենց սուբյեկտիվ կարծիքի ցանկացած արտահայտություն հասարակության կողմից մեկնաբանվում է՝ որպես Ընկերության պաշտոնական դիրքորոշում: Այս առումով, Մ-Դրամ-ը զգուշացնում է չմասնակցել այնպիսի թեմաների շուրջ քննարկումներին, որոնց մեկնաբանումը հանրային դաշտում արգելված է և/ կամ կարող է վնասել Ընկերության հեղինակությանը և կապիտալացմանը:

4.3 ՆԵՐՔԻՆ (ԻՆՍՍԱՅԴԵՐԱԿԱՆ) ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ընթացքում յուրաքանչյուր աշխատակից կարող է կարևոր տեղեկություններ իմանալ Մ-Դրամ-ի կամ այլ կազմակերպությունների մասին՝ նախքան այդ տեղեկատվության հրապարակային դառնալը: Նման ներքին տեղեկատվության օգտագործումը աշխատակցի կամ երրորդ անձանց համար անձնական օգուտներ ստանալու նպատակով խախտում է օրենսդրության պահանջը և անընդունելի է Մ-Դրամ-ի կողմից:

Օրինակ՝ Ընկերության ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, նախքան հրապարակային դառնալը, ներքին տեղեկատվություն են համարվում, և դրանց օգտագործումը՝ որպես անձնական խորհուրդ փոխկապակցված անձին, ևս խախտում է հանդիսանում:

Մ-Դրամ-ի աշխատակիցներ չեն կարող գործարքներ կատարել այլ ընկերությունների հետ, անկախ նրանից՝ նրանք ունեն ներքին տեղեկատվություն, թե՛ ոչ, կամ խորհուրդ տալ երրորդ անձանց կատարել այդպիսի գործարքներ կամ փոխանցել նյութական ոչ հրապարակային տեղեկատվություն այլ անձանց՝ առանց Ընկերության կողմից հստակ թույլտվության:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

5.1 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մենք ընդունում ենք, որ նորարարությունները, որոնք մենք օգտագործում ենք բիզնեսի արդյունավետությունը և հաճախորդների բավարարվածությունը բարձրացնելու համար, էական գործոններ են, որոնք Ընկերությանը նոր գործարար հնարավորություններ ընձեռնելու հետ մեկտեղ ստեղծում են ռիսկեր վերջինիս համար: Ուստի, Մ-Դրամ-ը փորձում է հավատարիմ մնալ կայուն զարգացման սկզբունքներին. վարում է իր բիզնեսը էթիկայի նորմերին համապատասխան, պատասխանատվություն է ստանձնում ընդունվող որոշումների և իր գործունեության հետևանքների, ինչպես նաև դրանց՝ հասարակության վրա ազդեցության համար:

5.2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր աշխատանքում մենք հավատարիմ ենք էկոլոգիական արդյունավետության սկզբունքին՝ ձգտելով առավելագույնս նվազեցնել Մ-Դրամ-ի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մ-Դրամ-ը, բոլոր մակարդակների աշխատակիցների հետ ձևավորելով բաց և վստահելի երկխոսություն, ապահովում է այնպիսի մշակույթ, որը հնարավորություն է տալիս հաղորդել մտահոգությունների մասին:

6.1 ՁԵԿՈՒՑՈՒՄ

Եթե Կանոնների, Ընկերության նորմատիվային ակտերի կամ օրենսդրության դրույթների հնարավոր խախտման վերաբերյալ տեղեկություններ կամ կասկածներ ունեք, հայտնե՛ք մեզ:

Մ-Դրամ-ը մշակել և վարում է հատուկ ընթացակարգեր այն աշխատակիցների և երրորդ անձանց համար, ովքեր ցանկանում են հայտնել խախտումների մասին: Կարող եք ընտրել ստորև նշվածներից Ձեզ հարմար տարբերակը.

- դիմեք անմիջական ղեկավարին կամ եթե տեղեկությունը վերաբերում է անմիջական ղեկավարի գործողություններին, ավելի բարձր մակարդակի ղեկավարին,
- դիմեք Համապատասխանության գծով համակարգողին (ցանկացած ձևով, այդ թվում՝ compliance@viva.am է. հասցեով),
- լրացրեք «Թեժ գծի» էլեկտրոնային ձևանմուշը, որը տեղադրված է Մ-Դրամ -ի պաշտոնական կայքում և կորպորատիվ հարթակում (այդ թվում՝ անանուն կերպով),
- գրեք «Թեժ գծի» էլեկտրոնային փոստի հասցեին՝ hotline@viva.am.

Ցանկացած անձ, ով խախտել է Կանոնների պահանջները, կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատում և (կամ) պայմանագրի խզում՝ այդ պայմանագրի և գործող օրենսդրության դրույթներին համապատասխան:

6.2 ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԱՐԳԵԼՔ

Մ-Դրամ-ն ապահովում է բոլոր հաղորդագրությունների անկախ և համապարփակ դիտարկումը և պաշտպանում է նրանց, ովքեր պատշաճ և անաչառ կերպով հայտնել են խնդիրների և մտահոգությունների մասին, աջակցել են հետազոտություններին և հրաժարվել են մասնակցել Կանոնների սկզբունքներին կամ պահանջներին հակասող գործունեության:

Եթե կարծում եք, որ խնդրի կամ խախտման մասին ծանուցելուց հետո Ձեր դեմ պատասխան միջոցներ են կիրառվել, դիմեք համապատասխանության գործառույթ իրականացնող ստորաբաժանում (compliance@viva.am):

ԱՄՓՈՓՈՒՄ

Մ-Դրամ-ը ձգտում է լինել բաց, գիտակից և բարեխիղճ Ընկերություն: Անհնար է նկարագրել էթիկայի նորմերին հակասող բոլոր այն սցենարները, որոնց կարող ենք բախվել: Փոխարենը, մենք ապավինում ենք առողջ դատողությանը, յուրաքանչյուրիս գիտակցությանը և պատասխանատվությանը, որպեսզի պահպանենք էթիկայի բարձր նորմեր ոչ միայն ինքներս մեզ, այլ՝ ողջ Ընկերության համար: Մենք ակնկալում ենք, որ Մ-Դրամ-ի բոլոր աշխատակիցները, շահառուները և երրորդ անձիք կգործեն Կանոնների ոգուն համապատասխան:

Մ-ԴՐԱՄ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

	Նկարագրություն
Նորարարություն	Մենք մշակում ենք առաջադեմ լուծումներ և հաջողությամբ կիրառում ենք դրանք:
Պատասխանատվություն	Մենք հոգում ենք այն ամենի մասին, ինչ անում ենք և պատասխանատվությամբ ենք վերաբերվում մեր քայլերին:
Հարգանք	Մեր բոլոր քայլերի հիմքում էթիկայի կանոններն ու մարդկային արժեքներն են:
Թիմային աշխատանք	Մենք աշխատում ենք ազնվորեն՝ կիսելով համատեղ հաջողության արդյունքները:
Հավատարմություն	Մեզ համար կարևոր են հավատն ու հավատարմությունը: